



ՀԱՏՈՐ ՄԱ

1893

ՕՐԻՈՍՏՈՍ

ԿԵՆՍԱԳԻՐ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵԶՆԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂԲԱՑԻՈՅ

(Տես յ'էջ 329)

ԹԻՊԷՏԵԻ Եզնիկ Բարսղէն օգտուած չլինի, սակայն ստուգիւ օգտուած է Եպիփանէն, և բաւական ընդարձակ հատուած մի (էջ 204–208, 296) թարգմաններ և մուծեր է յԵղծ աղանդոց՝ նորա «Ընդդէմ հերձուածոց» գրքէն (Բազմ. ԽԷ, 315, 386)։ Հատուածին պարունակութիւնն է ի մաստատարաց գրութիւնքն համառօտիւ։ Այդ իմաստները Եզնիկ, ինչպէս և ո'ր և է մարդ, չէր կարող իւր մտքէն ստեղծել, այլ հարկ էր ընթերցմամբ կամ ունկնդրութեամբ ուսանել յայլոց։ Արդ Եզնիկ զայնս կամ Եպիփանու գրքէն տեղեկացեր՝ և յիշողութեան մէջ առնելով գրեր է, և կամ ուղղակի Եպիփանու խօսքերը գրեր է իւր գրքին մէջ, մի և նոյն է. մեր արդի գրութիւնք իսկ նոյնպիսի վկայութիւններով լի են. ապա ուրեմն դա Եզնիկայ հրմ. առթիւնը չի նուաստացներ։

Բայց աւելի քան զայդ պետողութեան արժանի բան մի կայ. յիշեալ հատուածի մի և նոյն իմաստներն աղանդոց գրքի մէջ այլուր (220–230) կըրկնուած են, հեղինակին գրչով աւելի ընդարձակուած, և ստոյգ ևս ըսելով՝ նորա գրչին սեփական ծնունդ, և մէն մի իմաստի կից պատասխանը գրուած համառօտիւ. ուրեմն առաջինն աւելորդ էր։ Իսկ թէ Եպիփանու յիշած մուտք գրութիւնքը իւր շարադրածին իրեւ նախաբան առեր է Եզնիկ ըստ իւր ուսման (113, 199, 243), այդ ևս անհաւանական է. զի հարկ էր մին

միևնոյն կից գտուիլ՝ իբրև պատասխանին մօտ, համեմատ Եղնկայ սովորութեան, և ոչ միջանկեալ երկար և օտար իմաստներով զատուիլ։ Եւ եթէ երբորդ գրքին սկիզբը դրուած են՝ իմաստասիրաց բոլոր վարդապետութիւնը միասին յիշելու համար, այդ ևս անցարմար է։ որովհետեւ նախորդ նկատմամբ երկնից Ա վարդապետութենէն (199) զատուած են միջանկեալ Բ և Գ պատասխաններով։ և եթէ Եպիփանու Դ և Ե հատուածները զուրս հանեմք, զի առաջին պարբերութիւնն (208) պատասխան կը լինի Գի վերջին պարբերութեան (203)։ Արդ միթէ ստոյգ չլինի՞ր. եթէ ըսեմք թէ Եպիփանու հատուածքն եկամուտ են Եղնկայ զրոց մէջ¹, ձեռամբ օրինակողաց. զի արդէն բոլոր գիրքն խանգարուած է։ — Իսկ նկատմամբ Մարկիոնի հատուածին (296) զոգցեն Եղնկէն մուծուած է, իւր ծայրը երեքսողեան կապակցեալ յաւելուած մի ունելով։ սակայն նորա իմաստներն այլ ցրուած կը գտուին այլուր (237, 243—250, 253, 290, 293)։ պատահիկ մ'է, որ աւելորդ է՝ արդէն նախնաբար յիշուած լինելով, և պատասխանը տրուած. և յիշեալ յաւելուածին կարէ նաեւ Եպիփանու թարգմանչին կամ միւս հատուածոց ներմուծողին լինել։ որով Մարկիոնինն այլ միւս հատուածոց վիճակակից կը լինի։ Եւ այսպէս կամ այնպէս, ոչ ինչ նուաստութիւն է այդ Եղնկայ հանճարոյն, ինչպէս ըսինք։

Աւելորդ է խօսել իւր բազմակողմանի լեզուագիտութեան մասին, որ իւր պարծանաց վերայ ուրիշ մ'այլ կը յաւելու, արդէն միանգամ յիշատակած լինելով (Բազմ. ԾԱ, 11, 13)։ և որոյ ստուգութեան մկայեցին նաեւ եւրոպէացի գիտնականք։

Ահա այսպիսի է մերս Եղնիկ, և այսչափ չնաշխարհիկ իւր հանճարով և զիտութեամբ։ Իւր մեծահոյակ կենցաղէն և հինգերորդ և հետեւեալ դարուց իրեն ընծայած մեծարանքէն մեզ կը մնայ հետեւեցնել՝ թէ նա մեր Հարց մէջ քան զքնաւ երևելիներէն է։ Եւ իմաստութեամբն և զործով երախտաւոր ոչ միայն իւր դարուն, այլ և բովանդակ անցեալ ու ապագայ դարուց մեր ազգի կենդանութեան։ Մեր հինգերորդ դարու երևելի Հարց շատերն, որք իւրեանց նիւթական զործովն ազգին և մեզ պատկառելի երևեցան, օտարաց առջև թերեւս ոչ զարմանալի և ոչ հրապրքերի թուեցան։ Ընդ հակառակն Եղնիկ այնպիսիներէն է, որք նոցա առջև վկայ կը հանդիսանան հայ հանճարոյն և հայաստանեայց վաղեմի լուսաւորութեան, և 'ի մեծարան կը յորդորեն զանոնք։ Ուստի կ'ըսէ Վետտէր. « Իւր բազմակողմանի լեզուագիտութեան հետ կը զուգբեր Եղնիկ նաեւ բնածին սրատեսութիւն մի և ճարտաւ.

1. Հանդէս ամսօրեայ (Զ տարի, Թիւ 10, էջ 293) մերթ Եպիփանու յաղագս հերձուածոց ամբողջ գիրքը թարգմանուած կ'ենթադրէ Ե դարու մէջ, և մերթ լոկ յիշեալ մասն՝ Եղնկայ ձեռամբ իւր զրոց մէջ։ Արդեօք աւելի հաւանական չ'առաջինն, զնելով նոյնպէս Եղնկայ ձեռամբ, ըստ որում նորա լեզուի կնիքն ունի, և յետոյ կորուսուած. և յորմէ առնուած է յիշեալն հատուած։

րութիւն նկարագրելոյ զիրո 'ի գերազանց աստիճանի: Իւր ոճն է անշուշտ իբրեւ ազնուազոյն օրինակ Հայոց դասական լեզուին, յստակ, թափանցող և բնական » ։

Այսպէս է կենցաղն և այսպիսի հանճարն Հայոց վարդապետին: Բայց նա արդեօք չունէ՞ր ուրիշ գոյելիք և իւր միճակին պատշաճ ձիւրք մի ևս, վարուց սրբութիւն. կամ պարզ ըսելով, նա հայր եկեղեցւոյ չէ՞: Այդ կոչման արժանանալու համար, ըստ հայրախօսից հարկաւոր են հնութիւն, ուղղափառ վարդապետութիւն, սրբութիւն կենաց և յայտնի կամ լռելեայն հաւանութիւն եկեղեցւոյ: Առաջինը և երկրորդն անտարակոյս ունի Եզնիկ. իսկ մնացեալը՝ Քր. — փոքր ինչ հետազօտեմք ։

Եզնիկ թէպէտ իւր ժամանակակից պատմիչներէն յատկապէս սրբութեան մասին չէ գովում, սակայն իւր կենաց զանազան հանգամանքներ զրուական երկ մեզ զայն ունեւուն: Ի մանկութենէ հրաժեշտ կու տայ աշխարհի և առաւանձնութեան մէջ կը շնչէ միանձնական ոգին և աստուածային սէրը: Իւր կենանքն մինչև ցրահանայութիւն՝ կը զարգանայ Մեսրոբայ նման հոգեւունչ վարդապետի խրատներովն և օրինակաւ: Հաճելի և սիրելի կ'ընծայուի յետ իւր վարդապետին՝ նաև սուրբ հայրապետին Սահակայ: Այնքան հովուաց և սրբասէր վարդապետաց պատկառանաց և մեծ համարման կ'արժանանայ. և 'ի հարկէ այդ սոսկ իւր հանճարոյն համար չէր լինէր, որ անտարակոյս առանց գովելի բարուց ոչ ինչ պիտի համարուէր նոցա ընտրող մտաց առջև: Բետոյ կը բարձրանայ նա եպիսկոպոսական բարձր աշտիճանին. այդ չէր լիներ, եթէ նա գովելի և առաքինազարգ ընթացք մի ցոյց չտար. մանաւանդ նոյն դարուն, յորում հաւատք և աստուածապաշտութիւն աւելի վառ և զարգացուն լինելով, աւելի մեծ առաքինութիւն և սրբութիւն կը պահանջուէր եպիսկոպոսէ՝ որ աստուածապաշտութեան հայելի պիտի լինէր. և յայտնի է՝ թէ ինչպիսի՝ ընտրութիւն կը լինէր այն ժամանակ, մանաւանդ 'ի զահակաւութեան սուրբ Սահակայ. ընտրութիւն մինչև անգամ թարգմանչաց մէջ, յորոց երիցազոյներէն հազիւ երեք կամ չորս հոգի եպիսկոպոս կը յիշուին, մին կաթողիկոս. և կրտսերազոյներէն երկու կաթողիկոս և երկու եպիսկոպոս: Իւր հովութեան մէջ մեծ եռանդեամբ և աստուածային նախանձով կը կռուի Եզնիկ հաւատոց թշնամեաց դէմ՝ նոյն իսկ անձին վտանգաւ: Իւրմէ ոչ շատ հեռի՝ Է զարուն մերժը, իմաստասէր հայրապետ իւր ունեցած հաւատարիմ ծանօթութեան համեմատ կը դասէ զնա 'ի զլուսն անոնց՝ զորս Հոգին սուրբ հանեց և ընծայեց եկեղեցւոյն, լուսաւորիչ, ընտրեալ, արբանեակ և զործակից կամ ընթացակից Սահակայ և Մեսրոբայ: Իւր ընկերն Կորիւն կը կոչէ զնա օրինակ բարեաց՝ հանապազօրոյ ուսումնասիրութեամբ սրբոյն Սահակայ հետ, և ընդ նմա բարձրացնելով սրբութեան և աստուածապաշտութեան ջահը՝ 'ի անս Աստուծոյ ժողովրդեան: — Միթէ այս ամէնն ստոյգ մկայ չէ՞ն նորա առաքինութեան, սրբասէր և լուսաւոր կենցաղոյն, և վարուց անուշահոտութեան: Եւ եկեղեցւոյ հօրէ պահանջուած երրորդ ձիրքն

էր բուն այդ, « սրբութիւն կենաց » : Մեր յիշած հանգամանքներէն մին կամ երկուքը միայն նկատելով Մարտին՝ կը կոչէ զնա « յոյժ երևելի անձն ըստ մտաւոր և քաղցրական մասին » :

Իսկ չորրորդն, որ է « հաւանութիւն եկեղեցւոյ » : Մեր յիշած վկայութիւններէն կը տեսնեմք թէ եկեղեցին է զնա սիրողն, մեծարողն. ինքն է բարձրացնող նորա աստիճանը՝ ունեցած արժանաւորութեանն համար. ինքն է կոչողն զնա յուսաւորիչ, ընտրեալ : Ահա հաւանութիւն եկեղեցւոյ : Առ չորրորդ կէտն բաւական է, կ'ըսէ Ալզոգ, թէ « եկեղեցւոյ վարդապետութիւնն հաստատութիւն առնու նորա գրուածոց վկայութեամբ » . և այլուր՝ թէ նա « ծաւալող և ճշմարիտ ջատագով լինի նորա վարդապետութեան » : Եւ մեք տեսանք թէ եկեղեցին առաջարկեց Եզնկայ՝ գրել ընդդէմ ազանգոց, և զնա և նորա գրուածքը դրաւ որպէս պատուար ընդդէմ մարդութեանց և վկայ հաւատոց : Դարձեալ վկայ կաշեց զինքն Յոհան Իմաստաւէր ընդդէմ երեւութականաց որոց դէմ խօսած է (յէջ 264, Ը) : Տեսանք ևս՝ թէ նա ո'րքան մեծ ջատագով է : Ալզոգ կը յաւելու՝ թէ Հայր մի կարէ վարդապետ ևս կոչուիլ, եթէ ունի խոր գիտութիւն. և զայդ ո'վ չտեսներ Եզնկայ վերայ. ուստի և այդպէս կոչուած է 'ի գրչագիրս և 'ի տպագիրս իւր գրուածոց : Ահա և յայսմ կատարեալ է Եզնիկ :

Ուրիշ հարց մի. այդչափ արժանաւորութիւն ունեցող անձն ինչո՞ւ տօնելի չէ եղեր այլոց հետ . արդեօք մեր նկատած արժանաւորութիւնը չէ ունեցեր, թէ հակառակութեան ոգւով զուրս թողուեր է տօնելեաց միջէն : — Առաջին ենթադրութիւնն տեղի չունի. որովհետեւ մեր ունեցած յիշատակներն նորա հակառակը վկայեցին : Եւ դարձեալ կարեւոր պայման մի չէ՝ որ ամէն Հայր եկեղեցւոյ սուրբ ևս կոչուի և տօնելի լինի, թէպէտ արժանիս. կը տեսնեմք՝ որ մեր թարգմանիչներէն ոչ ոք է տօնուեր բաց յերեքէ որ են Դաւիթ Անյաղթ, Խորենացի և Եղիշէ. — թողունք Ղևոնդեանքը, որք կը տօնուին իբրեւ նահատակ. — և կարելի չէ բռնել թէ նոքա ամէնն արժանաւորութիւն չունէին : Մանաւանդ կը տեսնեմք՝ որ Կորին զՏիրայր և զՄուշէ կը կոչէ « սուրբք և զուարթագոյնք » . զԱնանիա՝ « սուրբ և երեւելի » . Բզմամուէլ՝ « Սուրբ և բարեպաշտօն », և այլ շատերն ուրիշ մակդիրներով. և ինքն 'ի Փարպեցւոյն՝ « այր հոգեւոր, ցանկալի, երանելի » . սակայն նոցա ոչ միոյն անունն կը յիշուի եկեղեցւոյ մէջ : Եւ Սոփերքն (Բ. 24) Մովսեսի և Դաւթի և այլոց հետ կը զուգէ զԵզնիկ, և բոլորն հաւասարապէս կը կոչէ « քարոզքն ճշմարտութեան, մշակքն հոգեորդք... վարդապետքն քաղցրուսոյց. դայեակքն դիւրահամբոյրք, դաստիարակքն գորովագութք... սիւնքն հաւատոյ... » արմատքն անմահութեան, կանոնքն արդարութեան... զարդքն զգաստութեան » : — Տեղի չունի թերեւ և ոչ երկրորդն. զի հաւ կը լրսեմք 'ի Փարպեցւոյն՝ (թղթ. էջ 607) թէ ո'րչափ կ'ատէին նաև Խորենացի և միւս թարգմանիչքը, և սակայն Մովսէս տօնուեր է. իսկ Եզնկայ նկատմամբ այդպիսի յիշատակութիւն չկայ : Դարձեալ թարգմանչաց ատեցողքն

ժամանակակից արեղայք էին. իսկ նոցա յիշատակը տօնողքն (ո՛ր դարու մէջ այլ եղած լինի) կաթողիկոսն և եպիսկոպոսունք։ Աւրդ, — համարելով թէ յիշատակն Ե—Ջ դարուց մէջ հաստատուած լինի, — ինչպէս հակառակորդաց ձայնին անուննդիր լինելով, տօնեցին յանիրաւի ատեցեալն խորենացի, նոյնպէս կարող էին տօնել և Եզնիկը, թէպէտ նման Մովսիսի հալածուած լինէր. մանաւանդ զի՝ որպէս տեսանք՝ մեծարեր է զինքն հինգերորդ դարն, եօթներորդ և ութերորդն ընդ իմաստասիրի, երեքստասներորդն, ըստ որում Եիրակոս զինքն երախտաւոր կը հռչակէ։ Սորա մեզ ծանօթքն. իսկ անծա-
նօթքն ո՛րչափ են արդեօք։

Ուստի մեք ուրիշ պատճառ մի կ'ենթադրեմք։ Մինչդեռ ուրիշ եկեղե-
ցեաց մէջ Եզնիկայ ունեցածին չափ սրբութեամբ հին հարց շատ անգամ առ-
նելի են եղեր, մեր եկեղեցին ընդ հակառակն ագահ է գտուեր առ իւր
Հարս այդ մասամբ։ Կը տեսնեմք՝ որ հինգերորդ դարու Հարց մէջ նոցա մի-
այն ստացեր են այդ պատիւը, որք կամ հաւատոց համար նահատակուեր
են՝ ինչպէս Ղևոնդեանք, կամ հալածուեր են արդարութեան համար և ծանր
տառապանք կրեր՝ ինչպէս խորենացի, և կամ իւրեանց վարուց սրբութեան
հետ ընդուներ են յԱստուծոյ նաև հրաշագործութեան շնորհը կամ իւրեանց
վերայ երկնաւոր երևոյթ մի տեսուած յառաջ կամ յետ մահու՝ որպէս Ե-
զիշէն. մեր բոլոր միա տօնելի հարց անտարկոյս այդ երեք վիճակաց միոյն
ենթարկուեր են նախ՝ և յետոյ տօնուեր։ Այնպստ է Գաւիթ Անյաղթի վի-
ճակն. քայց անծանօթ է նաև նորա կենցաղն. ուստի կարելի չէ ըսել թէ
նորա յիշատակն ուրիշ պատճառաւ հաստատուած լինի։ Արդ անշուշտ Եզնիկ
այդ հանգամանքներէն զուրկ է մնացեր, զի չեմք գիտեր իւր վախճանը. և
այդ պատճառաւ տօնելի չէ եղեր։ Սակայն ստուգիւ է « Հայր և վարդապետ
եկեղեցւոյ », զի ունի առ այդ խնդրելի արժանաւորութիւնը։ Եւ որպէս Հայր
և վարդապետ, միթէ արժանի չէ՞ օտարազգի տօնելի Հարց ոմանց ստացած
մեծարանաց։

Հ. Վ. Ս.

